





«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՏ ՀԱՐՑԱԶՈՐՈՅՑԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ

«ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ՇԱՀԵՐՈՒՆ ՄՊԱՌՆԱՅՈՂ ԱՄԷՆԷՆ ՄԱՀԱՑՈՒ ՎՏԱՆԳՆԵՐԻՆ Է»

ԲՍԱԻ ՄԱՀԱՇՄԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻ ԱՍԵՆԱՊԵՏ ՎԵՐ. ԴՈԿՏ. ՓՈԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆ



ՀԱՐՑՈՒՄ.- Մեթոդի մասնակի ընտրություններն առիթով հայ յարանուանության երեք հոգեւոր պետերը կոչ մը ուղղեցին լիբանանահայությանը...

Ծար.ը՝ էջ 10

ԵՂԲ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ ԳԻՐՔԻՆ՝ ԳԻՆԵՉՈՆ



Եղբ. Վ. Յովհաննէսեան կը մակագրէ գիրքերը:

Հ. Մ. Ը. Մ. Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, երէկ երեկոյեան ժամը 8:00ին, Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի քաղաքի ակումբին մէջ տեղի ունեցաւ գինեձօն՝ վերջերան եղբ. Վարդիվառ Յովհաննէսեանի «Յուշեր Հ.Մ.Ը.Մ. ակումբի կեանքէս» գիրքին հրատարակութեան առիթով:

Ծար.ը՝ էջ 10

ՄԵԹՆԻ ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԶԱԼՔԱՅԻ ԵՒ ՆԱՇՐ ԷԼ ՄՈԹԻ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ Կ'ԸՆԹԱՆԱՆ ԸՇՁԱՍԱԸ

Ինչպէս բոլոր Հ. Յ. Դ. ակումբները, Չալքայի եւ Նաիրի Էլ Մոթի Հ. Յ. Դ. ակումբներուն մէջ եւս ամէն երեկոյ կայ եռուկեմ՝ նկատի ունենալով, որ Մեթնի մասնակի ընտրութեան թուականը՝ 2 Յունիս, կը մօտենայ եւ մեր ակումբներուն մէջ կամուր տղաքն ու աղջիկները կը մրցին ժամացոյցի դէմ՝ ընտրութեան օրը անբերի մասնակցութիւն ապահովելու համար:



Չալքայի եւ ...



... Նահր Էլ Մոթի ակումբներուն մէջ աշխատանքները կ'ընթանան հեզասահ:

(Լուսանկարները՝ ՄԹԻՒՏԻՕ ԱՇՆԱԿԻ) տուփ նետելու Հ. Յ. թեկնածու Միրնա Մըր Դաշնակցութեան պահանջները վայելող

Ծար.ը՝ էջ 10

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈԼԷՃԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ ԵԼՈՅԹԸ

Հայ աշակերտներուն մօտ հայ երգի հանդէպ սէր ու յարգանք սնուցանելու իմաստով մեծ է դերը հայկական վարժարաններուն մէջ տարրուղ երաժշտական աշխատանքներուն:



Հայ Աւետարանական քոլեճի աշակերտական երգչախումբը յաջողաբար 4րդ տարին ըլլալով է, որ բնւ կը բարձրանայ: Շուրջ մէկուկէս ժամ տեւած յայտագիրին ընթացքին չորս տասնեակ աշակերտներով բաղկացած երգչախումբը ներկայացուց մանկական եւ ազգային դասականացած երգեր, որոնց երբեմն նաեւ կ'ընկերանային աշակերտներու կողմէ դաշնակի եւ այլ երաժշտական գործիքներու նուագակցութիւնը:

ԸՆՏՐԱՔԱՐՏԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

Երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն կարելի չէ մասնակցիլ առանց ընտրական քարտի:

Բոլոր այն քաղաքացիները, որոնք ընտրական քարտ չունին, կրնան դիմել Հ. Յ. Դ. հետեւեալ ակումբները:

ՊԵՅՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ Ազատամարտ ակումբ - Էշրեֆիէ՝ 01/449924

Ռոստոմ ակումբ - Շայաշէն՝ 01/328471 Նշան Փալանճեան ճեմարան - Արեւմըտեան Պէյրութ՝ 01/375412 Տիգրան Տամուր ակումբ - Սար Մխայեղ՝ 01/580141

ՖԱՆԱՐԻ ԵՒ ՌԱՌԻՏԱՅԻ ՇՐՋԱՆ Է. Ակնունի ակումբ - Ֆանար՝ 01/891546 Ռաուտայի ակումբ՝ 01/683372

ՍՆԹԻԼԻՍՍԻ ՇՐՋԱՆ Աղբալեան ակումբ՝ 04/722902 Նաքքաշի կեդրոն՝ 04/410691 Ժուլիէի ակումբ՝ 09/933096

ՉԱԼՔԱՅԻ ՇՐՋԱՆ Գարեգին Նժդեհ ակումբ՝ 01/877661

ՆԱՇՐ ՄՈԹԻ ՇՐՋԱՆ Անի ակումբ՝ 01/895481

ՊՈՒՐԸ ՀՄՄՈՒՏԻ ՇՐՋԱՆ Սարդարապատ ակումբ - Մարաշ՝ 01/262949

Ռուբեն ակումբ - Նորաշեն՝ 01/254322 Դրօ ակումբ - Արագած՝ 01/268647 Ազիբեան ակումբ - Սիս՝ 01/261636

Քաղաքապետարանի շէնքեր - «Բարգեւ Սիւնի» կեդրոն՝ 01/489477 Թեկիլիբեան ակումբ - Ամանոս՝ 03/587498 Սար Եուսէֆի ակումբ՝ 01/254709

Նիկոլ Դուման ակումբ - Թրատ՝ 01/260912 Քաղաքապետարանի շէնքեր՝ 01/263440

Հ. Յ. Դ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Այն միութիւնները, որոնք կ'ուզեն իրենց հրապարակային ձեռնարկներուն յայտարարութիւնները սփռել «Հայաստանի Հանրային Ընդհատադատութիւն» կայանէն, կրնան կապուիլ 03 / 739266 թիւին:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈԼԷՃ («Մեքսիք» փողոց, հեռ. 349816) 2002 - 2003 տարեշրջան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.- 2002 - 2003 տարեշրջանին Հայ Աւետարանական քոլեճը պիտի ունենայ բողոքոցն 12րդ պալատին դասարան:
2.- 2002 - 2003 տարեշրջանի նախնական արձանագրութիւնները սկսած են հին եւ նորեկ աշակերտներու համար:
3.- Ընթացիկ կրթական տարեշրջանի աշակերտները պարտին իրենց նախնական արձանագրութիւնները կատարել մինչեւ 28 Յունիս 2002:
4.- Նորեկ աշակերտներու դիմումագրութիւնը կ'ընդունուի ամէն օր Երկուշաբթիէն Ուրբաթ, կեսօրէ առաջ 9:30էն 12:30:
5.- Կրթնապատի դիւրութիւնները կը տրուին ուսումնապէս փայլուն եւ նիւթական դժուարութիւն ունեցող աշակերտներու:
6.- Բոլոր շրջաններու համար օրօպիւսի սպասարկութիւնը ապահովուած է:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԼՕԽԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԱՍՏԻՐԱԿԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Նիւթ
«ՀԱՄԱԿԱՐԳԳԻԶԸ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑԸ. ԴՐԱԿԱՆ ԵՒ ԺԽՏԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋ»
Կը խօսի՝
ՊՐՆ. ՅԱԿՈԲ ՓԱՆՈՍԵԱՆ
Դասախօս՝ ԱՍԻ եւ ԼԱՍԻ համալսարաններու մէջ
Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 29 Մայիս 2002ի երեկոյեան ժամը 7:30ին, ԼՕԽԻ «Արաքսի Պուլ-Ղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ:
ՀՐԱԽԵՐ

Կազմակերպութեամբ Հ.Յ.Դ. Լ.Ե.Մ.ի «Համապասպ» կորիպին
ՄԱՅԻՍ 28Ի ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ԿԸ ԲՆԱԽՕՍԸ
ԸՆԿ. ԵՍԱՅԻ ՀՄԱԹԵԱՆ
ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ ՄԱՍՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՎԻԳԷՆ ՏԻՍՉԵՔԷՆԵԱՆԻ
Տեղի կ'ունենայ Կիրակի 26 Մայիս 2002ին, կեսօրէ ետք ժամը 4:30ին Չալքի ակումբին ներս:
ՀՐԱԽԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԻՐ ԴՐԱՄԵՏԱՎԱՅԻՐ ԱՃԱԿԵՐՏԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՎԱՋՊՈՐՏԱՆ ԱՆՀԱՐԱՏԱՆԻ ԶՈՅԳ ԸՐԶԱՊՏՈՅՑՆԵՐ ԴԵՊՒ
ՄԵԼԱՆ ԵՒ ԱՐԶՆԻ
Ա. - 8ԷՆ 29 ՅՈՒՆԻՍ: Բ. - 9ԷՆ 30 ՕԳՈՍՏՈՍ 21 ՕՐ:
10 ՕՐ ՊՏՈՅՑՆԵՐ ՕՐԱԿԱՆ 4 ԱՆՔԱՄ ՈՒՏԵԼՈՎ, ԿԻՉԱՆ, ՏՈՒՆԵՐԸ, ՕՐԱՆԱԽԻ ՏՈՍՍԸ
Փիւնիկ
Միջին 12 տարեկան՝ 399 \$, 12էն 15 տարեկան՝ 495 \$, 15էն 19 տարեկան՝ 555 \$, 19էն վեր 780 \$
Սելզոնեան Կրթական Հաստատութեան ամալըքի հանդէսին առիթով, շրջապատյոյ դէպի Կիպրոս 14ԷՆ 17 Յունիս: Փիւնիկ միայն 199ԷՆ սկսեալ:
Ամէն օր առտու եւ իրիկուն՝ մեր օրապեճակին առջեւ, շքեղ օրօքարներով դէպի Հայկ, Դամասկոս եւ Լաքաքիա, 6 8ԷՆ սկսեալ:
ԿԶՄԿ. ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐԶ
Հեռ. 01/261177, 01/240654 եւ 03/233978
Գործակցութեամբ՝ TRANSPORT & TOURISM SERVICES S. A. L.

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՄԵԹՆԻ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՔ
Կազմակերպութեամբ՝
Հ. Յ. Դ. ՔԱՐՈՋՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻՆ
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 31 Մայիս 2002, երեկոյեան ժամը 9:00ին, «Շաղոյեան» կեդրոնի կից գտնուող կառատան մէջ:

ԲԱՑ ԱՍՍԱԿ

«ԱՉՂԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ստորև, ամբողջությամբ տեղ կու տանք ծանօթ հրատարակագիր, «Բագին» գրական ամսաթերթի երկարամեայ խմբագիր Պողոս Սնապեանի «Նամակներ»-ին:

«Աչղակ»-ի խմբագրության ուղղուած հարցումին ի պատասխան կ'ուզենք յայտնել, ինչպէս Պ. Սնապեան կը հաստատէ, որ թերթին մէջ յուշագրութիւններու տեղ տալու մասին որէնք գոյութիւն չունի:

Յուշագրութիւնները, առարկայական պատմագիտական հիմունք չեն ունենար, անոնք բնականաբար ենթակայական տպաւորութիւններու եւ համոզումներու արտայայտումն են: «Աչղակ» տեղ կու տայ հայ կենսաբան մէջ ծանօթ անուններու ստորագրութիւնը կրող յուշագրութիւններուն առանց իրացնելու անպայման հոն տեղ գտած անձնական տպաւորութիւնները կամ մեկնաբանութիւնները:

Ստանց ընդհանրացնելու սկզբունքային մօտեցումը, կ'ընդունինք որ այս պարագային կարելի էր առնել «նաեւ կարծիքը յուշագրութեան մէջ յիշուած ապրող անձերուն»:

«Ա.»

«Ազգակ» օրաթերթի 16, 17, 18 եւ 20 Մայիսի յաջորդական թիւերուն մէջ, ուրիշներու պէս մենք ալ կարգադրեցինք «Բագին»-ի քառասնամեակին առիթով գրած Յ. Գեղարդի յուշերը, բայց, անշուշտ, ո՛չ այդ ուրիշներէն ոմանց ստացած տպաւորութեամբ:

Այդ մասին հարեանցի մէկ - երկու խօսք ըսելէ առաջ, հետաքրքրական պիտի ըլլար իմանալ, թէ «Ազգակ»-ի խմբագրութիւնը ի՞նչ սկզբունքներով տեղ կու տայ յուշագրութեան հիմամբ գրուած յօդուածներու: Գրուած հարցումին պատասխանը կարեւոր կը թուի մեզ, անոր համար մանաւանդ, որ յուշագրութիւնը լրբօնու գետնի համարուած է «էն գլխէն» ու զգացական ու հաշուական տարբեր սպրդած են անոնց մէջ ու առիթ տրուած անելորդ վրդովումներու:

Այս մասին առանձին օրէքեր մը չենք հանդիպած մենք, բայց կը կարծենք, որ նման պարագաներու խմբագրութիւնը արթուն պիտի ըլլայ եւ ձեռնով մը առնէ նաեւ կարծիքը յուշագրութեան մէջ յիշուած ապրող անձերուն, եւ ասիկա թիրիմացութիւններ տպելու փորձութենէն զերծ մնալու եւ աւելորդ գլխացանկերէն հեռու մնալու անպատեհութենէն աւելի՝ ճշմարտութիւններու միայն տեղ տալու նախանձախնդրութեամբ:

Աշխատակիցներուն վստահելու եւ անոնց կարծիքները յարգելու սկզբունքներուն մենք չէ, որ պիտի ընդդիմանայինք, բայց ոչ յուշագրութեան պարագային, որովհետեւ յուշագրութիւնը ճշգրիտիմ վրայ կը յենու միայն, ուր տեղ չեն կրնար գտած ըլլալ կամ գտնել բանաստեղծութեան, վիպագրութեան կամ գիտաբնականական գիւղերուն մէջ արտօնուած ու փնտրուած թ. Յ. Գեղարդի «բագին»-եան յուշերուն մէջ: Իրականութեան վերջին ծայր հասարակ մնալու նախանձախնդրութեամբ ըսենք, որ «Բագին»-ի առաջին գրիւն մինչեւ վերջին էջը, ամբողջ քառասուն տարիներու վրայ անոր հետ եղած Պօղոս Սնապեան, մինչեւ ամսագիրին 20-22 փոստի փաստ դառնալու օրը, Յ. Գեղարդի նկարագրած երթելներուն, հանդիպումներուն ու խորհրդակցութիւններուն միայն անուղակի հետեւած էր, ան ուղղակի մասնակցութիւն ունեցած, երբ կարող Սասունի նշուարը Պօլյանեանի հետ խմբագրութեան պաշտօնի կոչեց նաեւ իր խնամքի անձը:

Սպասելի էր, որ Յ. Գեղարդի հոս ակելի գգուէ ըլլար եւ նախորդ բաժիններուն մէջ ինքն իրեն թոյլ տուած ազատութեան չափ ազատ չզգար ինքզինքը եւ «Բագին»-ի առաջին թիւին կազմութեան ու առաջադրութեան խմբագրութեան առիթով՝ ցանկութիւնները իբրեւ իրականութիւն ներկայացնելու փորձութենէն զերծ մնար:

Յ. Գեղարդի սովորութիւն ունի իր յուշերը նաեւ գիրքերու մէջ ներկայացնելու: Նման առիթով մը սպասելի է, որ վերանայի խնդրոյ առարկայ շարքին եւ «Բագին»-ի ծննդոցին առիթով պաշտօնական ժողովներու մէջ առնուած որոշումներն ու առանձին հանդիպումներու ընթացքին կատարուած արձանագրութիւնները հաշուի առնելով՝ փորձեալ արդար ըլլալ պատմութեան հանդէպ...

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

ՄԵՐ ԸԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

ԼԻԲԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊՈՒՆ ԱՐԵՎ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՀԵՏ

Զանի մը օր ետք Երեւանի մէջ տեղի կ'ունենայ բացուող Սփիւռք-Հայաստան Բ. խորհրդաժողովին, որ մէկ կողմէ մեր պատմութեան մէջ եզակի երեւոյթ է, միւս կողմէ, անհրաժեշտ քայլ՝ Սփիւռք-Հայաստան մերձեցման եւ գործակցութեան համար: Մեր ընթերցողները լուսաբանելու եւ թիրիմացութիւններէ հեռու պահելու համար շահեկան գրոյց մը ունեցանք Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեւ Յովհաննիսեանի հետ, զոր կու տանք ամբողջութեամբ:



Արեւ Յովհաննիսեան, Հայաստանի դեսպան Լիբանանում:

ՀԱՐՑՈՒՄ.- Իր բնոյթով, տարողութեամբ եւ գործնական քայլերով ի՞նչ տարբերութիւններ կան նախկին խորհրդաժողովին եւ այս վերջինին միջեւ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- «Հայաստան-Սփիւռք» երկրորդ խորհրդաժողովը միտուած է վերականգնելու եւ հետագայ զարգացում ապահովելու դեռեւս առաջին խորհրդաժողովի ժամանակ սկսուած գործընթացին, որը, ցաւօք սրտի, ընդհատուեց անմիջապէս խորհրդաժողովին յաջորդած ողբերգական իրադարձութիւններէ, դրա հետեւանքով ձեւաւորուած ոչ բարեկամ ընդհանուր միջնորդութիւնը եւ այլ՝ առարկայական կամ ենթակայական պատճառներով:

«Հայաստան-Սփիւռք» երկրորդ խորհրդաժողովը կը լինի առաջինի բնականոն շարունակութիւնը, կը վերադարձնի մեզ այն կէտը, որտեղից բաժանուել էինք միմեանցից առաջին խորհրդաժողովից յետոյ եւ կ'օգնի կատարելու առաջընթաց քայլ՝ մեր համազգային տարողութիւն ունեցող խնդիրներին լուծման ուղղութեամբ:

Կարելի է, որ մենք ցուցաբերենք իրատեսական մօտեցում, կարողանանք իրական գնահատական տալ մեր կարողութիւններին Հայաստանում եւ Սփիւռքում, եւ դրանից մեկնելով էլ՝ ձեւաւորենք մեր սպասելիքները այս խորհրդաժողովներից: Եթէ մենք ակնկալենք, որ երկօրեայ խորհրդաժողովը կը գտնի մեր համազգային ցաւերը «բալասանը», որ, սակայն, անմիջապէս տեղի կ'ունենայ ներգրտումների աննախագէտ ներհոսք Սփիւռքից դէպի Հայաստան, կամ էլ, սակայն, խորհրդաժողովին յաջորդող մէկ-երկու ամիսների ընթացքում կը հրատարակուեն միասնական դասազրբեր Սփիւռքի դպրոցների համար, կամ էլ Հայաստանի հանրային հեռուստատեսութիւնը արբանեակային կապով անմիջապէս կը սկսի հեռարձակել յատկապէս Սփիւռքի համար նախատեսուած արեւմտահայերէն հաղորդումներ, ապա կ'ունենանք հիասթափութիւններ: Մենք պէտք է գիտակցենք, որ նման խնդիրները պահանջում են խոր ուսումնասիրութիւն, մարդկային եւ նիւթական հնարաւորութիւններ, ինչպէս նաեւ ժամանակ՝ դրանք իրականացնելու համար:

Հ.- Իսկ գործնական գետնի վրա՞...

Պ.- Այս երկրորդ խորհրդաժողովը լինելու է աւելի գործնական եւ նպատակաւոր: Խորհրդաժողովին նախորդող ամիսների ընթացքում Հայաստանի եւ Սփիւռքի բազմաթիւ մասնագետների կողմից արդէն ուսումնասիրուել են ծրագրային յատուկ ոլորտներ, որոնք կը դրուեն խորհրդաժողովի մասնակիցների քննարկմանը: Յուսուով ենք, որ խորհրդաժողովի արդիւնքում գործնական համաձայնութիւններ ձեռք կը բերուեն որոշակի ծրագրերի շուրջ, որոնց իրականացումը կը սկսուի անմիջապէս խորհրդաժողովից յետոյ:

Բացի դրանից, կայանալիք խորհրդաժողովի արդիւնքում կարող են ստեղծուել այնպիսի լծակներ, որոնց օգնութեամբ հնարաւոր կը դառնայ մշակել համատեղ մօտեցումներ իբրեւ հաւաքականութիւն մեր կողմից դիմագրաւուող կարեւոր խնդիրներին ու մարտահրաւէրների առաջնահերթութիւնների լուծման համար:

Հ.- Ի՞նչ աշխատանքներ են նախատեսուած: Արդեօք կը բաւարարի՞ ժամանակը, որպէսզի իւրաքանչիւր մասնակից կարողանայ գործնական ելոյթ ունենալ:

Պ.- Ի տարբերութիւն առաջին խորհրդաժողովի, այս անգամ տեղի կ'ունենայ որոշակի, գործնական ծրագրերի աւելի լայնածաւալ քննարկում՝ յատուկ աշխատանքային խմբերում, որոնք կը սկսեն իրենց աշխատանքները խորհրդաժողովի բացման նիստից յետոյ՝ առանձին յանձնարարներում, հիմնականում հինգ թեմաներով՝ պիզնոս եւ տնտեսութիւն, տեղեկատվութիւն եւ լրատուամիջոցներ, քաղաքական յարաբերութիւններ եւ լուսինիկ, Սփիւռքի քաղաքական-կառուցային հարցեր եւ այլն: Նշուած յանձնարարներում առանձին թեմաների շուրջ արդէն իսկ որոշուած են մասնագէտները, որոնք կը ներկայացնեն զեկուցումներ, որոնց շուրջ արդէն կը ձեւաւորուեն քննարկումները մասնակիցների կողմից:

Այսօր արդէն խորհրդաժողովին մասնակցելու յայտ է ներկայացրել աւելի քան 2000 մարդ եւ, անշուշտ, ժամանակը չի բաւարարի որ բոլոր մասնակիցները ելոյթ ունենան այս կամ այն բացի շուրջ, ուստի կազմակերպիչ մարմինը դեռեւս նախապատրաստական փուլում խրախուսում էր առաջարկների վաղօրօք

ներկայացումը եւ յատկապէս ելեկտրոնային փոստով առ այսօր ստացուել են հարիւրաւոր առաջարկներ, որոնք հաշուի են առնուելու զեկուցողների ելոյթներում: Բացի դրանից, մասնակիցները եւս, կարծում են, պէտք է հնարաւորին չափ աշխատեն ինչպէս բոլորի ժամանակը, խօսեն ըստ էութեան, առանց չեղուելու քննարկուող թեմաներից: Նրանք, ովքեր առիթ չեն ունենայ արտայայտելու այս կամ այն հարցի շուրջ իրենց կարծիքը, կը կարողանան փոխանցել իրենց նկատառումները կամ առաջարկները կազմակերպիչ կոմիտէին՝ հետագայում քննարկման ներկայացնելու նպատակով:

Հ.- Այս բոլորը անհրաժեշտ է կարելու եւ, սակայն ո՛ր է մշակոյթի տեղը ու դերը խորհրդաժողովում:

Պ.- Յատուկ յանձնարարում նախատեսուած է գիտութեան, կրթութեան եւ մշակոյթի ոլորտներում առկա խնդիրների քննարկում: Հայաստանի եւ Սփիւռքի կարիքները մշակութային, կրթական եւ գիտական ոլորտում բազմաթիւ են եւ ուշադրութեան կարօտ: Որպէսզի կարողանանք հոգալ այդ կարիքները, պէտք է կարողանանք հնարաւորին խրատուել փոխանակումները Հայաստանի եւ Սփիւռքի մշակութային, կրթական, գիտական հաստատութիւնների եւ գործիչների միջեւ, պէտք է կարողանանք իրականացնել ուսուցիչների, գիտնականների եւ արուեստագէտների արդիւնաւէտ եւ գործարարելի փոխանակում:

Բացի դրանից, այս ոլորտները բաւական չափով են Հայաստանի քարոզչութիւն իրականացնելու եւ Հայաստանի շուրջ նպատակաւոր միջազգային հասարակական կարծիք ձեւաւորելու նպատակով, ուստի անհրաժեշտ է մշակել ընդհանուր մօտեցումներ «մշակութային, գիտական դիւանագիտութեան» զարգացման հարցում:

Հ.- Մշակոյթ եւ քաղաքակրթութիւն. ի՞նչպէս է մշակոյթը նպաստում քաղաքակրթութեան իրականացմանը:

Պ.- Վերջին տարիների փորձառութիւնն ապացուցեց, որ անկախութեան շրջանում Հայաստանում, չնայած առկա տնտեսական եւ ընկերային դժուարութիւններին, երբեք չդանդաղեց մշակութային կենսաբան, այլ նոյնիսկ հակառակը՝ այսօր մենք ունենք, սակայն, երիտասարդ բերթիւներ, գեղանկարիչներ, քանդակագործներ եւ այլ արուեստագէտներ ի մի շատ տաղանդաւոր սերունդ, որի ձեւաւորումը ընթացաւ ցրտի, մութի, ուժանիւթի ճգնաժամի չափազանց դժուարին պայմաններում: Այդպիսի մշակութային ներուժի խրատուելու, հայկական մշակոյթի ներկայացումը միջազգային մակարդակներում կարող է լինել պետական սերտուած եւ կարեւորագոյն ծրագիր, որը ժամանակի ընթացքում ոչ միայն ի մի նպատակի Հայաստանի եւ հայ ժողովրդի մասին բարենպաստ կարծիքի ձեւաւորմանը, այլեւ մշակութային երկխօսութեան արդիւնքում կարող է որոշակի դերակատարութիւն ունենալ միջպետական յարաբերութիւնների էլ՝ աւելի զարգացման եւ խորացման հարցում: Նոյնիսկ կարող է Հայաստանը առաւել գրաւիչ դարձնել օտարերկրեայ ներգրողների համար:

Պէտք է հաշուի առնենք նաեւ, որ յատկապէս Սփիւռքը այսօր ենթարկուած է հիւրընկալ երկրների ամենաբազմապիսի մշակութային ազդեցութիւններին, ուստի սերտուած մշակութային քաղաքականութիւնը անհրաժեշտ է ոչ միայն Սփիւռքում զուտ հայկական ինքնուրուինը պահպանելու համար, այլեւ Սփիւռքի իր հերթին կարող է զգալի դեր ունենալ հայրենաբնակ ժողովրդին տարբեր երկրների մշակոյթների ծանօթացնելու իմաստով: Դրա համար մեծ դաստիարակչական նշանակութիւն կարող են ունենալ Հայաստանում երիտասարդական ճամբարների հիմնադրումը, ուր տարբեր երկրներից կեանք հայ երիտասարդները կը կարողանան միասնաբար անցկացնել իրենց կամուրջային հանգիստը՝ գուրգուրելով այն ուսումնական եւ ճանաչողական արդիւնաւէտ ծրագրերի հետ: Այդպիսի մէկ երիտասարդական կենտրոն Մարդաժողով արդէն յաջորդ տարի կը կարողանայ ընդունել սփիւռքահայ երիտասարդներին:

Հ.- Սփիւռք - Հայաստան համագործակցութեան գծով ի՞նչ գործնական արդիւնքների կարող ենք հասնել համացանցի գործածութեամբ:

Պ.- Այսօր, համընդհանուր համաշխարհային

նացման, աշխարհում հեռաւորութիւնների աննախընթացման կրճատման, ինչպէս նաեւ բարձր արհեստագիտութեան՝ հեռուստատեսութեան, արբանեակային կապի, համացանցի կիրառութեան պայմաններում այլեւս չի մնում տարածութիւն, հեռաւորութիւն, սահման: Տեղեկատուութեան փոխանակումը դարձել է դերին եւ հասանելի բոլորի համար: Այսօր այդ արհեստագիտութիւնների կիրառումը կարող է ունենալ հսկայական ինչպէս դաստիարակչական, այնպէս էլ հայապահպանման նշանակութիւն:

Նման պայմաններում կարող են մեծապէս ամրանալ եւ կայանալ կապերը հայրենիքի եւ Սփիւռքի երիտասարդութեան միջեւ, սակայն այս համաշխարհայնացումը պարունակում է նաեւ որոշակի մարտահրաւէրներ եւ վտանգներ, այսինքն կապերը հայկականութեան, հայրենիքի հետ կարող են նաեւ տկարանալ: Այստեղ է, որ մեր հայկական եւ, մասնաւոր երիտասարդական կազմակերպութիւնները հսկայական անելիք ունեն՝ իրենց շարքերում ամրապնդելու կապը հայրենիքի, երիտասարդութեանը դաստիարակելու՝ օգտագործելու նորագոյն արհեստագիտութիւնները, ժամանակի հետ համաչափ քայլերով՝ ոչ միայն հետաքրքրուելու միջազգային հանրութեանը, այլեւ՝ Հայաստանի հետ կապն աւելի զօրացնելու համար:

Հ.- Այս բոլորը իրականացնելու համար մենք պէտք եղած պարտականութիւն ու տրեւելները ունի՞նք:

Պ.- Այսօր դրա համար առկա են բոլոր անհրաժեշտ նախադրեալները: Հայաստանը, աշխարհի շատ զարգացած երկրների հետ մէկ-տեղ, ձեռնամուխ է եղել տարբեր ոլորտներին նուիրուած համացանցային էջերի ստեղծմանը, այսօր համացանցում կարելի է գտնել ամենաբազմազան տեղեկատուութիւն Հայաստանի բազմաբնույթ անցուղաւոր, տնտեսական իրավիճակի, մշակութային նորութիւնների եւ նուաճումների, տեսարժան վայրերի մասին: Համացանցում կարելի է գտնել Հայաստանի ամենատարածուած լրատուամիջոցները, ընդ որում՝ մի քանի լեզուներով: Առկա են նոյնիսկ Սփիւռքին առնչուող բազմաթիւ կայքեր, որտեղ կարելի է գտնել Հայրենիք - Սփիւռք առնչութիւններին վերաբերող տեղեկատուութիւն: Դրանից կ'ուզէի ձեր ուշադրութիւնը հրաւիրել յատկապէս [www.armeniadiaspora.com](http://www.armeniadiaspora.com) կայքի վրայ, որում առաւելապէս ամբողջական արտացոլուած են Հայաստան - Սփիւռք առնչութիւններին վերաբերող հարցերը:

Պակաս հարցուստ չէ նաեւ համացանցի սփիւռքեան բաժինը, ուր կարելի է գտնել բազմաթիւ հետաքրքրաշարժ տեղեկատուութիւն Սփիւռքի գոյացման արմատներին, Հայ Դատի, Հայոց Յեղափոխութեան միջազգային ճանաչման գործընթացի, տարբեր գաղութների պատմութեան եւ այլնի մասին: Ուրախութեամբ պէտք է նշել, որ համացանցում զգալի ներկայացութիւն ունի նաեւ լիբանանահայութիւնը, միեւնոյն ժամանակ կ'ուզենայի մաղթել, որ այդ կայքերը էլ աւելի շատանան եւ դառնան իւրաքանչիւր հայի սեփականութիւն եւ ժամանակի ընթացքում իրենց զգալի օգտակարութիւնը ունենան նաեւ լիբանանահայութեան ներքին կենսութեամբ:

Հ.- Հայրենիք - Լիբանան մշակութային փոխյարաբերութիւնները ի՞նչպէս են զարգանում:

Պ.- Հայաստանի եւ Լիբանանի միջեւ մշակութային ոլորտում համագործակցութիւնը գտնուում է բարձր մակարդակի վրայ: Երկու պետութիւնները մշակոյթների նախարարութիւնների միջեւ դեռեւս 1997 թուականին ստորագրուել է համաձայնագիր՝ մշակոյթի բնագաւառում համագործակցութեան մասին, ինչպէս նաեւ՝ յատուկ գործնական ծրագիր, որը թարմացուած է ամէն երկու տարին: Ինչպէս

Չրոյցը վարեց ԳՈՎՏ. ՄՈՎՍԷՍ ՀԵՐԿԵԼԵԱՆ

# Գրական Էջ

## ՊԱՐԶԻՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՆԸ

**Տ**ասնամեակ մը առաջ անմահներու արքայութիւն փոխադրուած հայ արդի քերթողութեան ամենէն ինքնատիպ դեմքերէն մէկը՝ Համօ Սահեան, վերջերս անգամ մը եւս ժամադրուեցաւ հայ գրասէր ընթերցողին հետ, երբ հայրենի «Վան Արեան» հրատարակչատունէն լոյս աշխարհ եկաւ հայրենի գրականագետ Շչորս Դաւթեանի խմբագրած «Համօ Սահեան» խորատեղծը, մտածողը, մարտը» խորագրեալ ուշագրաւ ժողովածուն:

Հայրենի, սփիւռքահայ եւ օտար 37 գրողներու, գրականագետներու եւ գրչեղբայրներու յուշերը, սրտի խօսքերը, յօդուածներն ու ուսումնասիրութիւնները 375 էջերու մէջ ամփոփած այս շահեկան հատորը դարձեալ բացաւ հորիզոնները ուսանելի փորձառութիւններով եւ ստեղծագործական կենսափորձով հարուստ Համօ Սահեանի եւ ան կրկին ու կրկին դարձաւ անդիմադրելի ներկայութիւն:

\*\*\*

«Նայիրեան դալար բարտի» մշտականաչ եւ խորախորհուրդ բանաստեղծութեամբ Հայաստան աշխարհի բարտիները վերահասցուցած, անոնց թելադրական խշշոցները ոսկի տողերու մէջ ձուլած երիտասարդ բանաստեղծը, «Որոտանի եզերքից» 1946ին վերցուցած իր ինքնատիպ բնականաբար հայ բնորոշութեան դարպասը թակելէ, «Նայիրեան դալար բարտի» եւ «Մայրամուտից առաջ» հատորներով հայ քերթողութեան անդաստանէն ներս հաստատաբայ մուտք գործելէ ետք, 1960ական թուականներուն, եղբարբայտ Պարոյր Սեւակի հետ իրաւամբ պիտի դառնար հայ արդի բանաստեղծութեան երկրորդ եզակի դեմքը:

1968ին լոյս տեսած «Քարափնէրի երգը» հատորը աստուածատուր բացառիկ կարողութիւններով օժտեալ բանաստեղծին աստղը պիտի բարձրացներ նոյնքան բացառիկ բարձունքներ, երբ իր Խաչիպապ պապի, քարափներու, ժայռերու, առուակներու, մանուշակներու, հողի, մթնոլորտի, մասուրի, լոյսի, շշուկի եւ բոյրի, կարն խօսքով աստուածային մաքրութեամբ եւ անդիմադրելի լուսայնութեամբ միահիստուած սահեանական քնարերգութեան անդիմադրելի հնչեղութեան դիմաց՝ հայ գրականագիտու-

թիւնը պիտի ստիպուէր հաշուի նստիլ մարդու ներկայութեամբ բնութիւնը աւելի շնչաւորած եւ բնութեան գոյներով ու բոյրերով, արձագանգներով ու երգերով մարդուն ներքին աշխարհը ալ առաւել հարստացուցած այս ինքնաման գրական երեւոյթին հետ:

Աւելի՛ն. «քարափներ»-ու անխախտ գեղեցկութիւններէն բացուող սահեանական աշխարհը, փաստօրէն, հատոր առ հատոր, աւելի պիտի ընդարձակէր Հայաստան աշխարհը իրրեւ խորհուրդ ու ամբողջութիւն լաւագոյն պարագըրկած այս քարէ պատարագին ու նոյնքան քարաշէշտ համանուագին հմայիչ սահմանները: «Սեզամ բացւիր» (1972), «Կանչէ կռուակ» (1973), «Իրիկանակ» (1976), «Ժայռից մասուր է կաթնով» (1979) անուն վաւերական քերթողագիրքերը ոչ միայն անմահութեան դափնեպսակ պիտի ապահովէին ամենէն անբանաստեղծական երեւոյթներն ու բառերը ոսկեծոյլ ստեղծումներու այլափոխող այս անկրկնելի կախարհին, այլեւ Համօ Սահեանի քնարերգութեան դիմաց պիտի բանալին օտար հորիզոններ, երբ ուսական, ուրբանական, վրացական, լեհական եւ արտասահմանեան գրական շրջանակներու ուշադրութիւնը վաղուց գրաւած Համօ Սահեան պիտի հրապուրէր օտարագրի բանաստեղծներ ու գրականագետներ, որոնք իրենց անթաքայտ ոգեւորութիւնն ու հիացումը պիտի արտայայտէին շնորհակալական յօդուածներով, կարդալէ ետք «տաղանդներով աներեւակայելիօրէն հարուստ Հայաստանի» այս մեծահարուստ որդիին հայաստանադրոշմ գոհարները: Եւ «արեւին թիկնած, արեւից շիկնած» այս իրաւ հայուն անուրբ իրաւամբ պիտի դառնար մէկ իրաւ հոմանիշը անխարդախ, մաքրածոյլ եւ աստուածային բանաստեղծութեան:

Պարզ ու անկրկնելի: Խիտ ու բնական: Կուռ ու վեհ: Թափանցիկ ու թելադրական: Տաք ու վարակիչ: Անդիմադրելի եւ ուժեղ: Բազմախորհուրդ ու յաւերժական: Հայաստանի պէս եւ Հայաստանը յաւերժութեան ծիածանով պսակած հայ ոգիին ու գայն լաւագոյնս պատարագող Մետրոպոլիտան հայ խօսքին նման:

Ահա՛ Պարզին Վեմուրիւն Համօ Սահեանի անմահութեան գաղտնիքը:

Ս. ԿԻՐԱՎԱՍԵԱՆ

## ՆԱՅԻՐԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՆԱՅԻՐԵԱՆ ԴԱԼԱՐ ԲԱՐՏԻ

Նայում ես ու շորորում Կարոյիսէ քո շորերում՝ Շուք արած ճամբի վրայ մանկութեան կանաչ արտի. Բո կանչը Կնգում է Կիլի իմ սրտի խոր ձորերում, իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նայիրեան դալար բարտի:

Ա՛խ, սաես խարոյկ լինես՝ բոնկուած կանաչ բոցով, ես հեռուից քեզ եմ գրգռում կարօտով կրակ սրտի. Լցնում ես դաշտերն ամէն հարապատ քո խշշոցով, իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նայիրեան դալար բարտի:

Իմ արտոյտ-մանուկն սիւս խաղում է քո շրաքում, Զո փառքի երգ է շրջում շրթերով կրկուն վարդի. Զոյ արա նրա կեանքին, հոր նման գոռուի անքուն, իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նայիրեան դալար բարտի:

Ես՝ երգիչ հրի, սրի, շահ չունեմ քո սիրուց պատ, Քեզ նման կանաչ կեանքով քեզ համար էլած մարտի. Կը մեռնեմ, միայն թէ դու դարերում ապատ խշշաս, իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նայիրեան դալար բարտի:

Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում  
Սեփական հոգին խորովել չկայ,  
Ախր ուրիշ տեղ  
Սեփական բախտից խոնովել չկայ:

Ախր ես ի՞նչպէս վեր կենամ գնամ,  
Ախր ես ի՞նչպէս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ  
Հողի մէջ այսքան օրհնութիւն չկայ,  
Այսքան վաստակած յոգնութիւն չկայ:  
Ախր ուրիշ տեղ ձիւնի մէջ՝ արեւ,  
Եւ արեւի մէջ այսքան ձիւն չկայ:  
Ախր ուրիշ տեղ տեղահան եղած,  
Եկած ուներով Արագած սարի,  
Ուներին յենուած Սասնայ տուն չկայ:  
Ախր ուրիշ տեղ  
Ամէն մի քարից, առուից, աղօսից  
Իմ աչքերիմ իմ աչքերին նայող  
Մանկութիւն չկայ...

Ախր ես ի՞նչպէս վեր կենամ գնամ,  
Ախր ես ի՞նչպէս ուրիշ տեղ մնամ,  
Ախր ես ի՞նչպէս ապրեմ առանց ինձ:

### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Բանաստեղծութիւնն - այդ սրբագործութեամբ:  
Ինձանից պոկուած իմ հուրիւնն է,  
Աշխարհի առաջ աշխարհով փորձուած  
Իմ խստութիւնն ու իմ մեղմութիւնն է:  
Այդ - արեան եռքն է իմ երակների:  
Խոհերիս խորհուրդն ու խտացումն է,  
Այդ - կրկնութիւնն է իմ անկրկնելի  
Եւ իմ գոյութեան փոխհատուցումն է:  
Բանաստեղծութիւնն - այդ մարդկանց հանդէպ,  
Ու ծաղկանց հանդէպ իմ ջերմութիւնն է:  
Հողմի, ամպրոպի, կայծակների հետ  
Իմ քառասորոք մտերմութիւնն է:  
Այդ - իմ մէջ փրկուած ապնիւն ու բարին,  
Իմ լացով կնքուած անմեղութիւնն է...  
Բանաստեղծութիւնն գրելու պահին  
Ամբողջ աշխարհը իմ տեղն ու տունն է:

● Ախր ես ի՞նչպէս վեր կենամ գնամ,  
Ախր ես ի՞նչպէս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,  
Ախր ուրիշ տեղ հորովել չկայ,

## ԽՕՍՈՒՄ Է ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆԸ

### ԸՍՏ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱԹԱՆԻ

Սակաւախօս մարդու համբաւ ու անուն շինած Համօ Սահեանի շրթները բացած Կրոցակիցներու մէջ յատուկ տեղ կը գրաւէ հայրենի բանաստեղծ Յարութիւն Յովնաթան: Բնութեան մէջ ար-

տասանուած սահեանական խոստովանութիւնները Յ. Յովնաթանի հետագային ամփոփեց մէկ խորագիրի տակ:

Ստորեւ՝ փունջ մը այդ խոհերէն:

Անտառը երկու միլիոն տարւայ ընթացքում է անտառ դարձել, կտրեցիր՝ տեղը կ'անապատուի: Ասելս է՝ այդ տեղում այլեւս նոր անտառ չի աճի: Անտառի հետ թփուռածինը գնաց, անտառում ապրող կենդանիները գնացին: Բոյսերը, հաւերը գնացին, անտառի ձայնները գնացին: Տեսիլ եմ ծառեր, որոնց մագարմատից կաթող ջրերն աղբիւր են դարձել: Մտառը վերացրիր, աղբիւրը կը չորանայ:



ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ,  
Բանաստեղծը  
Մտածողը  
Մտաքը

Անտառի տեղում դնում են գործարան, որի ծուխը սպառնում է շրջապատի բուսական աշխարհի գոյութեանը: Դէմ չեմ գործարանի ստեղծմանը, բայց իմանանք՝ որը որտեղ ենք դնում: Իմանանք՝ գտածն է շատ, թէ՛ կորցրածը: Սեւանի հարցը, որ գրողները դնում էին, ժամանակին համարուեց լոկ գեղեցկութեան հարց: Քառասուն տարի յետոյ միայն գլխի ընկան, որ գրողները ճիշդ էին, որ նրանք առաջ էին քաշում գոյութեան խնդիր:

Երբ մարդ գրկուում է արժանապատուութիւնից, խղճից, բարոյական նկարագրից, ո՛չ միայն աշխարհահայեացքն ու ընկալումներն են փոխուում, այլեւ փոխուում է նոյնիսկ ֆիզիքական տեսողութիւնը: Մարդը դառնում է կողքերի եւ իր թշնամին: Կորցնում է բարոյական զգացումը: Այսքանից յետոյ ես էլ դառնամ աշխարհին եւ մարդուն ասեմ. «Փրկեցէք բարութեան ձեր զգացումները»:

Մեր ժողովրդի գոյութեան համար շատ բանով պարտական ենք մօրը, տատին, կնիւն՝ առհասարակ: Դառնանք պատմութեանը:

Պոռնոյի համար մարդիկ իրենց սիրածին էլ են գոհում: Նոյնիսկ կէօթէն սէրը գոհեց իշխանութեան համար: Գահին բարձրացածը կտրելու է դէմն ելածի գլուխը եղբայրը լինի, քոյրը լինի, ով էլ լինի: Ինչ կայ դրա մէջ: Եղբուն կրք է: Մեր թագաւորներին բանաստեղծական խոստովանածքը խանգարել է, բռնել են թշնամուն եւ բաց թողել:

Պոռնոյի տես ինչ է ասում. «Յոյսը վշտերի քոյրն հաւատարիմ»: Յոյսը վշտերի քոյրն, այն էլ հաւատարիմ, սաել է թէ՛ յոյսը տխուր մարդու զգացողութիւն է, թոյլ մարդու զգացողութիւն, կորուստ կրած մարդու զգացողութիւն: Մինչդեռ հաւատը ուժի արտայայտութիւն է, հաւատը շատ մեծ ու ակտիւ բան է, հաւատը գործողութիւն է, այսինքն՝ մտածածը պիտի գնաս ու կատարես, պիտի ստեղծես, անհնարին անգամ հնարաւոր դարձնես:

Ես հաւատում եմ, որ մենք մեր ձեռքերով կերտելու ենք մեր ապագան, կերտելու ենք այնպէս, ինչպէս մենք ենք ուզում: Անպայման: Թուրքն էլ գիտէ, որ մենք մեծ հաւատ ունենք մեր յաղթանակի հանդէպ, գիտէ նոյնիսկ, որ իր մերկացրած սրից շատ աւելի գօրաւոր է մեր լուսատուր հաւատը:

Հ. ՍԱՀԵԱՆ

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս այն վարպետն է, որը «ոչ բանաստեղծական» ներթից կարող է ստեղծել լիահնչուն արւեստի գործ:

### Գ. ՄԱՀԱՐԻ

Համօ Սահեանը բերում է բոյրեր ու գոյներ, անմեկնելի տրամադրութիւններ, լացախանոց ժպիտ ու կենդանութիւն, անբռնագրօս ուժով ստեղծում կախարդական պատկերներ, որոնք եւ պատմութիւն են, եւ հասարակական բովանդակութիւն, եւ այդ բոլորի հետ միասին մտերիմ ու սրտաշարժ անձնական ապրումներ:

Յաճախ են գրել ու ասել, որ Համօ Սահեանն իր լեռնաշխարհի, իր հողի ու քարի ծնունդն է, ու նշմարիտ են ասել: Բայց կարելու չէ, որ նա ո՛չ միայն այդ հողի ու քարի, այլեւ իր ժողովրդի դարաւոր ոգու ծնունդն է, եւ այդ ոգին է, որ նրա ստեղծած գործութիւնները դարձնում է եւ այդքան ներկայական, եւ այդքան ոգեղէն:

Քննախնայ չեմ ըլլալու, քննախնայ չեմ ըլլալու, քննախնայ չեմ ըլլալու: Ներքին այս պահանջը ամէնօրեայ եղաւ այս բանաստեղծին մօտ եւ յոգնեցուցիչ չեղաւ ընթերցողին համար երբեւիցէ: Անփոխարինելի այդ հարստութեան ծոցը Սահեանի հոգին մանկացաւ միշտ ու գիրքէ գիրք հայրացաւ արուեստը:

Սահեանն օժտուած է պոետական սուր տեսողութեամբ, որից, բուն

է, բնութիւնը գաղտնիքներ չունի: Որպէս իսկական արուեստագետ, նա կարողանում է «նկատել աննկատելի, լսել անլսելի», որսալ դժուար ընկալելի:

### Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆ

Սահեանը գծել է Հայաստանի իր քարտէշը, աւելի ճիշդ՝ արարել է իր Հայաստանը, որը այնքան նման լինելով նախակերպարին, պարունակելով այնքան շատ քար ու քարափ, հող ու մղեղ, գիւղի հոտ, կաթի ու խոտի բուրմունք, միեւնոյն ժամանակ գարմատալիտը է աննիւթական:

### Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Բառը նրա պոեզիայում, բուն է, առաջին անգամ է դրոււմ գրական շրջանառութեան մէջ եւ անկորուստ անդրադարձում դեմքը հոգեւոր այն աշխարհի, որի բացայայտման է կոչուած ծառայելու ինքը:

### Յ. ՄԵՆՈՅԵԱՆ

Սահեանը օժտուած է պոետական սուր տեսողութեամբ, որից, բուն

Սահեանը օժտուած է պոետական սուր տեսողութեամբ, որից, բուն

Ս. ԱՂԱԲԱՐԵԱՆ

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## ԱԿՆԱՐԿ

### Ի ԽՆԴԻՐ ԻՆՔՆԱՏԻՊ «ԳՈՅՆ» Ի ՊԱՀՊԱՆՄԱՆ

Անվիճելի իրողություն է համացանցին ունեցած մեծ ներդրումը հաղորդակցութեան բնագավառին մեջ: Տեղեկութիւններու փոխանակումի դրուժիններ յեղաշրջելէն անդին՝ համացանցը դարձած է նաեւ խօսքի ազատութեան գլխաւոր ամպիոն, ուրկէ կրնայ արտայայտուիլ աշխարհի որեւէ անկիւնը գտնուող ոեւէ անձ: Սակայն, ինչպէս ամէն տեղ, համացանցին վրայ եւս կարգ մը մարդիկ աւելի ազատ են, քան՝ ուրիշներ, աւելի ազդեցիկ, քան՝ սովորական մահկանացուներ: Ասոնք համացանցի առտապետներն են, որոնք աշխարհը վերածած են ելեկտրոնային գիւղի մը, ուր «գիւղացիները» այնքան կշիռ ունին, որ քան՝ միջնադարեան ճորտերը: Սակայն աշխարհի մէջ, ուր համակեցութիւնը կարեւոր է թէ՛ տիրող ուժերուն եւ թէ՛ բազմամիլիոն ենթարկուողներուն, կարելի եղած է ստեղծել դրուժին մը, ուր «մեծ»երը յաճախ գաղտագողի կը քաղեն պտուղները, առանց պարտիզպանը ծեծելու, յաճախ գաղտագողի իսկ պարտիզպանը կ'ա՛մ չ'ուզէր տեսնել գանձը, կ'ա՛մ ալ հետաքրքրուած չէ անոնցմով:

Չկարծենք, թէ համացանցին վրայ խօսքի ազատութիւնը եւ տեղեկութիւններու անձնականութիւնը պահող ուժերը, համացանցի շուքերը, տարուած են համամարդկային անշահախնդիր հաւատամքներով: Ընդհակառակն, համակարգիչին միջոցով անոնք կը թափանցեն տուններէ եւ ուղեղներէ ներս՝ ստեղծելու համար միագոյն աշխարհ մը, ուր պատմութեան քի տանալը «Մարտոնալտ»-ն է, իսկ վաճառքի ներկայացումը՝ մարդուն ինքնութիւնը եւ իրիցը:

Հոգեթով խօսքի՝ բոլոր անոնց համար, որոնք համակարգիչը կը տեսնեն իբրեւ վնասակար ու «սադայեակաւ» սարք, որ մարդս կը հեռացնէ իր դրացիէն, գիրքէն, աւանդական արժեքներէն: Սակայն մարդու գոյատեւման գաղտնիքը կը կայանայ շահագործողին գէները անոր դէմ՝ օգտագործելու յանձնարութեան մէջ: Այսպէս յարատեւած են փոքր ժողովուրդներ եւ ակնաւոր եղած են հսկայական կայսրութիւններու անկումին: Կայսրութիւններ, որոնք ունեցած են գէները, բայց ոչ՝ յարատեւութեան գրաւակներ հանդիսացող մարդկային արժեքներ:

Խորեմացիի «փոքր անոն» մէկն է այն փոքր ժողովուրդներէն, որոնց համար ջայլամի նման գոլուր հողին տակ պահելով վտանգէն փրկուելու ինքնախաբերութիւնը մահացու է: Յարատեւումը յեղաշրջումներու նկատմամբ անտարբեր կեցուածքով եւ ինքզինքն բթացնելու վարժութիւններով չէ, որ պայմանաւորուած է, այլ այդ յեղաշրջումները, համացանցը թէ՛ այլ, օգտագործելու արժեքներու պահպանման եւ փոխանցումին ի խնդիր:

Եւ ինչպէս գերուժեր համացանցը կ'օգտագործեն երկրագունդը դարձնելու համար միագոյն աշխարհի եւ համացանցին նման աշխարհով մէկ տարածուած հայ ժողովուրդը հարկ է իր արժեքներով թրծէ համացանցը եւ իր ինքնատիպ «գոյն»ը պահպանէ նաեւ համացանցի միջոցով:

ԽԱՉԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

### ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԿ ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ ԿՈՅՍԵՐՈՒ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ՝ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Ի գիտութիւն մեր բարեպաշտ ժողովուրդին, այսու կու գանք յայտնելու, թէ յառաջիկայ Երկուշաբթի, 27 Մայիս 2002ին, Ս. պատարագ պիտի մատուցուի եւ թափօր՝ Ս. կոյսերու մատուցներով, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ Երկուշաբթի 6:00ին, մասնակցութեամբ թեմիս քահանայ հայրերուն եւ Դպրեվանքի սարկաւազներուն:

Ս. պատարագը պիտի փատուցէ եւ պիտի քարոզէ՝ Դպրեվանքի տեսուչ՝

ԸՈԳԾ. Տ. ՊԱՐԹԵՒ ՎՐԴ. ԿԻԼԻԻՄԵԱՆ

Պատարագին պիտի կատարուի հաւաքական խոստովանքը եւ հաղորդութիւնը:

Միտով կը հրապարակուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Ս. պատարագին:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐԿՈՐԴ

www.lemagan.com

## Ո՞Վ Կ'ԻՇԽԵ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ

Պատկերացուցէք աշխարհ մը, ուր պետութիւններ իրենց բացարձակ հակադրուին տակ կը պահեն համացանցը: Համացանցի իւրաքանչիւր կայքէջ պարունակութիւնը աչքէ կ'անցուի, իւրաքանչիւր բնամակի «անմեղունակութիւն»ը կը ստուգուի, եւ գերուժեր իրենց տրամադրութեան տակ կ'ունենան ձեր անձնական բոլոր տեղեկութիւնները, համացանցին վրայ ձեր վարած գործունէութեան մանրամասնութիւնները, դրամատեսիլի հաշիւներու մասին տուեալները եւ այլն:

Անկասկած, որ «գարհուրելի» աշխարհ մը պիտի ըլլար այս մէկը, ուր թէ՛ եւ այսպէս կոչուած «հաշիւներ» կ'ընդունին պիտի բացայայտուին,



յեցնել իրենց շահերուն: Այդ օրերուն, տրուած ըլլալով, որ համացանցը վերապահուած էր միայն համակարգչային մասնագէտներու, համալսարաններու եւ անվտանգութեան դրութիւններու, միահեծան իշխանութիւն մը ստեղծելու կարիքը այդքան ալ չեջնի մէջ մինչեւ վերջերս կարելի չէր միջազգային լրատուութեան համացանցի շարք մը կայքեր այցելել: Մէլուտակաւ Արաբիոյ, Իրանի եւ շարք մը այլ երկիրներուն մէջ եւս սահմանափակումներ կան:

Խորքին մէջ պետութիւնները կ'ամ առանձին մարմիններու կողմէ համացանցի նիւթերուն հսկողութիւնը կարեւոր է, պայմանաւ որ պահանջներ խօսքի ազատութեան եւ ժողովրդավարութեան չափանիշները: Նման հսկողութիւն համացանցը հետո կը պահէ ոճրային ցանցերու գործունէութիւններէն, ցեղապաշտական քարոզչութիւններէ, եւ այլն: Սակայն համացանցին հսկող մարմիններ յաճախ կ'ոտնակոխեն մարդկային շարք մը իրաւունքներ, կը լրտեսեն ընկերութիւններու եւ պետութիւններու հաշիւներ, հետեւաբար, յաճախ հսկողութեան չզոյնութիւնը եւ անիշխանական վիճակը նախընտրելի կը թուին ըլլալ:

Այսպէս, օրինակ, «Echelon» անունով լրտեսական ցանցի մը գոյութիւնը այսօր գրեթէ փաստացի իրողութիւն է: Միացեալ Նահանգներու, Քանադայի, Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի կառավարութիւններուն համագործակցութեան արդիւնքն է, եւ ըստ շարք մը մասնագէտներու, այս դրութիւնը կը լրտեսէ հեռաձայնային եւ ելեկտրոնային հաղորդակցութիւններ, «աչքէ կ'անցընէ» բնամակներ եւ կը հետեւի արբանեակներու միջոցով կատարուող հաղորդումներու: Վերոնշյալ երկիրները կը հերքեն նման դրութեան մը գոյութիւնը:

Համացանցի վրայ կ'իշխեն նաեւ մամուլի «հսկանքներ»: Անոնց ազդեցութիւնը մեծ է, որովհետեւ իրենց հակադրուին տակ է համացանցի վրայ տեղադրուած լուրերուն եւ տեղեկութիւններուն պարունակութիւնը:

Եւ տակաւին, գոյութիւն ունին «քոնսփիրսի» բիրտաւանքներ, որոնք համացանցին վրայ իշխող աւելի մութ ուժերու մասին կը խօսին: Չափազանցութիւն, թերեւս, սակայն շատ հաւանաբար համացանցը օգտագործողներու անձնական տեղեկութիւնները այդքան ալ անձնական չեն այլեւս...

## ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### «ԻՄԷՅԼԸՐ-ՓԼԱՍ»


Եթէ արհեստագիտական նորութիւնները պիտի արժեւորուին իրենց գործնական արժեքները, ապա «Իմէյլըր-փլաս» սարքը բացարձակ ծախողութիւն է իսկ եթէ նման նորութիւններ պիտի արժեւորուին նաեւ իբրեւ «նորութիւն», ապա սարքը կրնայ դրական գնահատական ստանալ:



